



կալվածագրերը գրված են տեղական՝ Նախիջևանի, Երևանի, Օրդուբադի և այլ վարչական կենտրոնների սպասավորների ձեռքով՝ բազմաթիվ ոճական, քերականական և ուղղագրական սխալներով և կապվելով լեզվի պատմության, վավերագրերի գրչության արվեստի ու ընդհանրապես իրանական դիվանագրության հետ, ձեռք են բերում ընդհանուր արևելագիտական կարևորություն:

Այս աշխատանքի և գիտական մամուլում իրար հաջորդող հրապարակումների ու հոդվածների ամփոփումը դարձավ «Ագրարային հարաբերությունները Արևելյան Հայաստանում 15—17-րդ դարերում» մենագրությունը, որի համար 1968 թ. նրան շնորհվեց պատմական գիտությունների դոկտորի աստիճան: 1977 թվականին էլ ուսերեն հրատարակված հիշյալ ուսումնասիրությունը նվիրված էր քննվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի պատմության լուսաբանմանը ագրարային հարաբերությունների տեսանկյունից, ուր մանրամասնաբար քննվում է հայ ավանդական ավատական հողատիրության ունեգրվումը XV—XVI դարերում և այդ հողային տիրույթների հետագա վիճակը XVII դարում: Հայ եկեղեցական իրավունքի պատմության համար մեծ կարևորություն ունի ուսումնասիրության եկեղեցական հողատիրությանը վերաբերող վեցերորդ գլուխը:

Հակոբ Փափագյանի և Մատենադարանի հանգուցյալ տնօրեն, ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի ջանքերով հրատարակվեց նաև Հովհաննես Տեր-Ռավթյան Զուղայեցու «Հաշվետումարը»: Վերջինս Տիբեթ այցելած չորրորդ անձնավորությունն է, որը գրավոր հիշատակ է թողել աշխարհի տանիքը համարվող այդ երկրի մասին, ինչպես նաև մանրամասնաբար նկարագրել իր անցած ճանապարհին գտնվող քաղաքների առևտրա-տնտեսական հարաբերությունները, շնորհիվ որի Նոր Զուղայի բարբառով գրված հիշյալ ձեռագիրը, լինելով հայ խոջայական կապիտալի ուշագրավ էջերից մեկը, մասնամանակ Հնդկաստանի և Տիբեթի սոցիալ-տնտեսական, մաքսային, հարկային, դրամա-իրային ու տարբեր չափա-կշռային հարաբերություններն արտացոլող կարևոր սկզբնաղբյուր է: Հրատարակիչներն էլ՝ բազմավաստակ երկու գիտնականները, պատրաստել են դժվար վերծանելի և ընթեռնելի այս հաշվետումարի բնագիրը՝ կազմելով և բացատրության կարոտ բարբառային որոշակի աղճատումների ենթարկված արևելյան բառերի ու տերմինների բառարանը համապատասխան բացատրություններով, որոնք զգալապես հեշտացնում են հետազատողների աշխատանքը:

Հայկական ու ընդհանուր արևելյան աղբյուրագիտության պարզապես զարմանալի իմացությամբ Հակոբ Փափագյանը խկույն նկատում, գնահատում և արժևորում է ձեռքը վերցրած յուրաքանչյուր արաբագիր մատյանում և վավերագրում հանդիպող ամեն մի հիշատակություն և փաստ, որը կարող է նպաստել Հայաստանի և Իրանի պատմությանն ու մշակույթին առնչվող տարբեր հարցերի լուսաբանմանը: Այս իրողությամբ է պայմանավորված նրա գիտական հետաքրքրությունների թեմատիկ լայն ընդգրկումը, որը ներառում է պատմության և բանասիրության հետ առնչվող մի շարք գիտակարգեր:

Հակոբ Փափագյանն ունի ոչ միայն գիտական անվիճելի հեղինակություն, այլև քաղաքացիական բարձր նկարագիր և տոհմիկ հայկական դիմագիծ՝ խորին հարգանք ներշնչելով թե՛ հայագիտության մեջ իրենց առաջին քայլերն անող բոլոր այն երիտասարդ մասնագետներին, ովքեր ուղղակիորեն շփվում են նրա հետ, և թե՛ նրանց, ովքեր ականատեսն են Մատեն-

